

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆ

ՀԱՅՐ ՊՕՂՈՍ Ծ. Վ. ԱՆԱՆԵԱՆ.

ՄԱՐԴԸ ԵՒ ՀԱՅԱԳԷՏԸ



Կեսանքի 77-րդ տարում, 1998 թ. յուլիսի 11-ին Բելյորսի Մխիթարեան վանքում իր մահկանացուն կնքեց մեր ժամանակների հայագիտության արդիմաշատ մշակ Հայր Պօղոս (Ս. առգանի անունով՝ Անտոն)՝ ծայրագոյն վարդապետ Անանեանը: Ծագումով գաղատացի (անկիւրացի) ծնողներից 1922 թ. ապրիլի 27-ին ծնուել է Կ. Պոլսում, որի տարբեր դպրոցներում նախնական կրթութիւն ստանալուց յետոյ, 1933 թ. դեկտեմբերի 16-ին Վենետիկում ուսումնառութիւնը շարունակել է Ս. Ղազարի միաբանական Ընծայարանում: Վերջինս աւարտելուց յետոյ, 1939-1940 թթ. ուսումնական տարում նախապատրաստուել է միանձուն վանական կեսանքին, Հոռոմի Գրիգորեան համալսարանի իմաստասիրական բաժնին աւարտելուց յետոյ, 1943 թ. հոկտեմբերի 24-ին ուխտել է

անդամագրուել է Մեծն Մխիթար Սեբաստացու միաբանութեանը: Ապա աւարտել է նոյն Գրիգորեան համալսարանի աստուածաբանական բաժնին եւ 1946 թ. սեպտեմբերի 8-ին Սուրբ Ղազարում ձեռնադրուել կուսակրօն արքեպայ (քահանայ): 1947 թ. ստացել է իր աւարտած՝ Ընծայարանի փոխպատասխանատուի ծանր պաշտօնը եւ երիտասարդ վանականի իր ետանդն ամողջովին նուիրել Մեծն Սեբաստացու նոր յաջորդների կրթութեանը, զարգացմանը եւ նրա ուխտի բեռի տակ մտնելու նախապատրաստմանը: Ս. Ղազարի ընծայարանի դասընթացն աւարտելուց յետոյ, ապագայ միաբաններն իրենց համալսարանական, հիմնականում աստուածաբանական կրթութիւնն ստանում են Հոռոմում. Հ. Պօղոսն ապագայ միաբանների պատրաստման այս շատ կարեւոր աշխատանքները ղեկավարել է 1947-1952 եւ 1955-1957 թթ. Ս. Ղազարում, 1952-1953 եւ 1957-1964 թթ.՝ Հոռոմում:

Ըստ Հայ եկեղեցու ծիսական ասանդոթի՝ 1960 թ. ծայրագոյն վարդապետութեան աստիճաններն ստացել է միաբանութեան ժամանակի ընդհանրական արքաճայր Սրբապետ արքեպիսկոպոս Ուլուհոնեանից: 1964 թ. միաբանական ժողովի կողմից ընտրվել է Մխիթարեան միաբանութեան ներկայացուցիչ (գործակալ) Վատիկանի պապական Աթոռում, միաժամանակ ստանձնել է Մխիթարեան վանքի համալսարանական աշակերտների մեծաւորի պաշտօնը:

1970 թ. յուլիսի 10-ին ընտրուել է Մխիթարեան միաբանութեան ընդհանրական արքաճայր (մեծանուն հիմնադրից սկսելով, պատուաւոր այս անունը կրող տասներորդն էր) եւ այս պատասխանատու պաշտօնը վարել տասներկու տարի, ապա միաբանի իր աշխատանքը շարունակել Լիբանանում, յետոյ՝ Հոռոմում, ի վերջոյ՝ վերադարձել Վենետիկ եւ, հակառակ ծայրայեղ վատառողջութեանն ու

գրեթե կուրացած վիճակին, նուիրունլ զուտ հայագիտական պատմա-բանասիրական իր հետազոտութիւններին: Տարիներ շարունակ միաբաններն ու վանքի Ռիւբերը նրան տեսնում էին նոյն դիրքի մէջ՝ գրասեղանին դրուած ձեռագրին հակուած, ձախ ձեռքին մեծ խոշորացոյց, աշով համակարգչի ստեղծաշարը շօշափելով զտնում էր անհրաժեշտ գիրը, ապա խոշորացոյցով պատտառի վրայ ստուգում գրածը. միաժամանակ՝ վաղուց քայլում էր միայն գաւազանին կքած:

Տարիներ շարունակ անտեսում էր իր միաբանակիցների՝ հանգստանալու առաջարկ-յորոգրները. այս անգամ հին բարեկամներին ու ծանօթներին տեսնելու համար մեկնեց Բելրուս՝ ե... տեղիս Մխիթարեան վանքի բակում լուղարկատրուեց ս.թ. յուլիսի 16-ի երեկոյեան ժամը 5-ին:

Հայր Պօղոսի՝ Մխիթարեան միաբանների «Հայր վարժապետ»-ի մահը մեծ կորուստ է ո՛չ միայն միաբանութեան, այլե՛ ընդհանրապէս հայագիտութեան, հայ միջնադարագիտութեան եւ հայկական բանասիրութեան ու աղբիւրագիտութեան համար:

Նկարագիրը տիպական վանական ճգնակեաց գիտնականի էր. խօսելիս ու գրելիս ճշգրիտ բառն ընտրող, գրածի նկատմամբ խստապահանջ եւ աւելորդ բառ չգործածող, լուռ, քչախօս, գրեթե աննկատ մնալու չափ համեստ, սակայն արժանապատիւ կենցաղաւոր: Նկարագրից էր, որ հեռախօսով լսուած՝ իր իտալերէն խօսքն անգամ հայերէն էր թուում, սակայն իր գրած իտալերէնը մաքուր էր նրան լատագոյն տիրապետող իտալացու գրածի չափ: Ե՛նցնէմք իրեն տրուած իր կոչումը համարում էր հայագիտութիւնը, սրտի ցաւով եւ մեծ ափսոսանքով նրանից խլուած էր համարում վարչական աշխատանքին եւ հալէպեան ու հոմեան պաշտօնավարութեանը տրուած՝ իր կեանքի երիտասարդ ու լատագոյն տարիները: Սրտի ջերմ բարեկամութիւն ունէր հայաստանաբնակ շատ հայագետների, առանձնապէս՝ Մաշտոցեան Մատենադարանի մայիկին տնօրէն, հանգուցեալ ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանի հետ: Այսօրուայ հեռուից նկատում ենք, որ այս երկու մեծ հայագետները գիտական ու մարդկային նկարագրի ընդհանուր կէտեր շատ ունէին: Մի անգամ մի առիթով խօսում էինք հայերէն ձեռագրերի յիշատակարանների ժողովածու-հատորաշարի մասին, եւ լսեցինք նրա իմաստուն ամփոփումը. «Առանց պետականութեան եւ առանց Լեւոն Խաչիկեանի տաղանդաւոր մտքի այդ բացառիկ շարքը գոյութիւն չէր ունենայ»:

Հայր Պօղոսը հայագետ բանասէր էր բառի դասական իմաստով. գրադուել է մեր մատենագրութեան ու պատմութեան առաւելապէս դասական շրջանի յուշարձաններով ու խնդիրներով: Սակայն ամենակարեւորն այն է, որ խղճի գիտնական էր, որեւէ խնդրի վերաբերող կանխատրամադրութիւն չուներ, զերծ էր նաեւ միջնադարից եկող կրօնա-դասանական նեղմտութիւնից, լայնախոհ ու արդարամիտ գիտնական էր:

Յիշատակի ոգեկոչման մպատակադրում ունեցող այս յօդուածով մեծ բանասէրի վաստակը գնահատելն առաւել քան դժուար է, ուստի եւ փորձելու ենք բաւարարունլ իր երկասիրութիւնների խորագրերի թումրկումով եւ նրանցից մի քանիսի համառօտ գնահատութիւնով:

Նրա աքբահայրութեան տարիներին միաբանութիւնն սկսեց մի կարելուր ձեռնարկում՝ հրատարակութիւնը «Հայագիտական մատենադարան «Բազմա-վէպի» շարքի, որ նոյնամուն հռչակաւոր հանդէսում տպագրուած ծաւալում եւ

շարունակական ուսումնասիրությունների առանձնատիպ-գրքերի մատենաշարն է եւ որն իր գիտական արժեքով ու նկարագրով հաւասարուում է վիեճակական ճիւղի Մխիթարեանների «Ազգային մատենադարան» շարքի գիտական բարձր մակարդակին: Ժարքս սկսուեց հէնց Հ. Պօղոս Անանեանի հմտալից ուսումնասիրութեամբ՝

- «Աւերտսի պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանութիւններ» (1973): Ընդամենը 140 էջանոց ճշգրտախօս եւ արդարամիտ գրքոյնի մէջ տեղը բերեց հմտօրէն կասկածի ենթարկուած շատ հարցեր, նրա ուսումնասիրութեան շնորհիւ մեր բանասիրութեան՝ «Աւերտսի պատմութիւն» քննադիր շարունակեց մնալ իր հեղինակի անուան ներքոյ, որով եւ մնաց պակաս ենթակայ՝ գերքննադատութեան մանրադիտակով զինուած արեւմտեան «անաշտ» եւ սակաւագէտ հայագիտութեան վիճարկումներին ու ժամանակագրական տեղաշարժումներին:

- «Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ» (1979). մանրխոյզ հետազօտութեամբ պարզեց ու փաստեց այն, ինչ նշանաւոր «Ազգապատում»-ի մէջ զուտ զգացումով պնդել էր մեծանուն Մ. արքեպս. Օրմանեանը. այսինքն՝ Հայ Եկեղեցին ամբողջատ տետողութիւն ու կենսագործունէութիւն ունէր Քրիստոս-Գրիգոր Լուսաւորիչ ժամանակագրական ընթացքում:

- Բանասիրական գիտ կամ ճշգրտումների շարք է նրա «Դաւիթ Տարօնացի թարգման Ս. Բարսեղ հայրապետի «ի ծնունդ փրկչին» ճառին» (1982) ուսումնասիրութիւնը, որով պարզուում են նաեւ Դաւիթ Անյաղթի ժառանգութեանը վերաբերող տարակարծութիւնների կնճիռները:

- «Ներսէս Բագրեւանդցի իշխան Հայոց՝ հեղինակ դաւանաբանական գրութեան մը» (1989). սրանով փաստաւէր բանասէրի ուսումնասիրութիւնը մեզ է պարզեց Գրիգոր Մագիստրոսի մի այլ նմանակ՝ Ժ դարի մի հայ ազնուականի, որ գիտական-աստուածաբանական հարցերի եռանդուն նախանձախնդիր էր:

- «Քննութիւն Հայ Եկեղեցւոյ պատմութեան Ե. եւ Զ. դարերու շրջանին» (1991). սա նոյնպէս աննախադէպ աշխատութիւն է, վերաբերում է մեր Եկեղեցու 440-600 թթ. պատմութեան «վիճուած կամ տարտամ մնացած հարցեր»-ին, ունի իր պարունակութիւնը բացայայտող ենթավերնագրեր. «Թուվէփ Կաթողիկոս Հողոց-մեցին եւ կաթողիկոսական ինքնավար ձեռնադրութեան հարցը», «Աշտիշատի ժողովքը եւ անոր մասնակցող եպիսկոպոսները», «Գիւտ Կաթողիկոս Վանանդացի եւ Թէոդորիտոս Կիւրացի եպիսկոպոսին երկու մամակները», «Բարզէն Կաթողիկոսի երկու մամակները...», «Ներսէս Բ. Աշտարակեցի»: Ենթավերնագրերի այս ոչ լրիւ թուարկումով հանդերձ, մենք չկարողացանք ներկայացնել ընդամենը 130 էջ բռնող գրքիս ընդգրկման լայնութիւնը, ուստի եւ ասեմք, որ սա պէտք է լինի Հայ Եկեղեցու 440-600 թթ. շրջանի պատմութեան որեւէ տեսակի նոր շարադրանքի հիմնական ուղեցիչը:

Իսկապէս բանասէր-տրամաբանի ուսումնասիրութիւն է Հ. Պօղոս Անանեանի «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի» (1969) պատմա-քննական ընդարձակ ուսումնասիրութիւնը. տառ առ տառ ուսումնասիրել է Մաշտոցին վերաբերող ծովածառայ գրականութիւնը, որ բաւական անեց մեր գրական մշակոյթը հաստատող-հիմնադրի 1600-ամեայ յոբելեանի (1962 թ.) առիթով, հիմնական եւ օժանդակ աղբիւրների բոլոր հնարատրութիւնների գործածումով ճշգրիտ սահմանել է Մեծն Մաշտոցի գործունէութեան ընթացքն ու ժամանակագրութիւնը: Ուստի եւ բնական

է, որ տպագրութեան ընթացքի մէջ գտնուող նրա՝ Հայկական մանրանկարչութեան վեցետիկեան պատկերագրքի (այբով) հմտային հետազօտական շարադրանքից շատ անելի առաջ սպասում ենք լոյսընծայուելիք մի այլ կարեւոր գործի՝ «Կոռիւմ, Վարք Մաշտոցի. քննական ուսումնասիրութիւն»:

- «Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցութիւնը Փոտ Պատրիարքի եւ Նիկողայոս Ա. Պապի հետ» (1992). սա նոյնպէս նախորդի ոճի պատմա-քանասիրական հմտային ուսումնասիրութիւն է, կարեւորութեամբ սրան չի գիշում. անելի՛մ՝ Հայ Եկեղեցու 1700-ամեայ կարեւոր յոբելանի առիթով անչափ կարեւոր է նաեւ յաջորդը՝ «Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները» (1960. նոյնը, ֆրանսերէն՝ Le Museon, 1961):

Արտակարգ բժախնդիր ու հետետողական էր բնագրեր քննելիս, առանկ ես՝ հրատարակելիս. աննախադէպ եւ արտակարգ խնամուած է նրա տասնամեակների աշխատանքը՝ «Զաքարիա Կաթողիկոս Զագեցի, ճառք» (1995) աշխատասիրութիւնը, որ ոչ պատահաբար նուիրուած է Մխիթարեան միաբանութեան «եղեքհարիւրամեայ յոբելիւնի», «Մատենագրութիւնք նախնեաց» շարքի ՄԷ հատորն է եւ քանասիրութեան ու բնագրագիտութեան մեթոքեայ պահանջների ամենահետետողական կիրառման արգասիք: Աշխատութիւն-հրապարակումն ընդգրկում եւ համապարփակ է. պատրաստուած՝ բոլոր հնարատր հարցերին նոյնպէս հնարատր չափով պատասխանած լինելու ձգտումով, ուստի եւ կրկին կիրառում ենք ենթավերնագրերի մասնակի թուարկման սկզբունքը. «Զաքարիա Կաթողիկոս - կենցեղ», «Աշոտ սպարապետ», «Ռուինի երկրաշարժը», «...Ճառերը», «Ճառերուն հարագատութեան հարցը», «Զեռագիրներ», «Զեռագիր բուն օրինակը», «Զեռագրին ուղղագրական յատկանշիչները». սրանց յաջորդում է ճառերի բովանդակային քննութիւնը իր հետեւեալ հատուածներով. աստուածաբանական բովանդակութիւնը, քրիստոսաբանութիւն, պատարագ եւ հաղորդութիւն, Աստուածամայրը, եկեղեցին, պատկերայարգութիւն, լեզուն եւ բառամթերքը: Այս ամենը՝ իսկապէս գիտականօրէն խտացեալ 47 էջի մէջ է. յաջորդող 521 էջում հեղինակի անուսով հասած 14 ճառի իսկապէս գիտական-քննական հրատարակութիւնն է, որ հիմնուած է ճառերի ամբողջական ու մասնական 22 ձեռագրի եւ խնդրին վերաբերող գիտական գրականութեան ընձեռած բոլոր հնարատրութիւնների բարեխիղճ եւ անկողմնակալ քննութեան վրայ: Հրապարակումն անթերի են դարձնում նաեւ կցուած ցանկերը՝ «իշատակուած Ս. Գիրքի տեղիքներու» (էջ 525-33) եւ «Յատուկ անուններու»: Սա ինքնորոշ դարի մեր գրականութեան եւ պատմութեան (յատկապէս՝ եկեղեցական) զանազան կողմերի քննութեան փայլուն սկզբնադրի լաւագոյն հրատարակութիւնն է, որ պատասխանում է մեթոքեայ գիտութեան բոլոր տեսակի հարցերին, միաժամանակ համապատասխանում է ներկայիս բնագրագիտութեան ամենախիստ պահանջներին:

Անտեղի չենք համարում մի թանկ յուշ-պատահիկի վերարտադրումը. իմանալով որ պատրաստում ենք զանազան ձեռագրերում ցրուած եւ տարբեր ժամանակների ու հեղինակների պատկանող՝ «Կաթողիկոսունք Հայոց» ընդհանուր անունով բնորոշելի բնագրերը, նախ տարակուսեց՝ «Նս էլ այդ աշխատանքն սկսեալ եմ, բաւական էլ առաջ եմ գնացել», սակայն մի փոքր խորհելուց յետոյ՝ դեմքը իսկապէս պայծառացաւ՝ «Սակայն ես հազիւ թէ հասցնեմ դա աւարտել. լաւ է, որ դու անում ես, այդ բնագրերը մեր պատմութեան համար շատ կարեւոր են»:

Թուարկենք որոշ՝ այլ արժեքատր գործեր եւս. «Վարդան վրդ. Այգեկցի. Խրատը» (1956), «Ս. Ղազարի մատենագրարանի յունարէն ձեռագրերը» (1953՝ ֆրանսերէն), «Մխիթար Սեքաստացի, Նամակներ եւ փաստաթղթեր» (1980՝ իտալերէն): Այսքանով էլ, բնականաբար, չենք կարող սպառել Հայր Անանեանի վաստակի գնահատութիւնը, որովհետեւ դա արդէն մեր դարի հայագիտութեան պատմութեան համապարփակ շարադրանքի ապագայ հեղինակների անելիքն է:

Հ. Պօղոս Անանեանը բաւարարել է նաեւ միջավայրի օրախնդիր անհրաժեշտ կարիքները՝ գրել է «Կաթօլիկական հանրագիտարանի», «Եկեղեցական պատմութեան եւ աշխարհագրութեան բառարան»-ի, «Գրադարան սրբոց»-ի բոլոր հայկական միւթ-յօդուածները:

Մեր օրերի մեծ հազագէտն անկատար ծրագրեր եւ կիսանկատար գործեր շատ թողեց. Մխիթարեան միաբանութեան ներկայիս գրեթէ բոլոր անդամները Հայր Պօղոսի աշակերտներն են. նրանց սրբազան պարտականութիւններից մէկն այսօր դառնում է «Հայր վարժապետի» աւարտի մօտեցրած աշխատութիւնների հրապարակումը, միւսը՝ «Բազմավէպ» հանդէսի եւ այլ հայագիտական պարբերականների էջերում ցրուած՝ նրա մնայուն գիտական արժէք ունեցող յօդուածների մէկտեղումն ու գրքային ժողովածուի տեսքով տպագրութիւնը:

Հայր Պօղոս ծայրագոյն վարդապետ Անանեանի գիտական վաստակն ումի ոչ միայն կիրառական, այլեւ՝ ուսուցողական մեծ արժէք. նրա գործերի ընթերցումով ձեւատրուելու են հայագէտների նորանոր սերունդներ:

Կրկենք, տիպար ճգնակեաց վաճական էր, ողջամտութեամ, համեստութեամ ու զսպութեամ մարմնացում: Գիտնականը, ընդհանրապէս, մտաւորականը (իմչպէս եւ մարդն ընդհանրապէս) անկրկնելի է, բայց արժէ որ Աստուած թէ՛ Մխիթարեան միաբանութեանը եւ թէ՛ ընդհանրապէս հայագիտութեանն այսպիսի ինքնամոռաց եւ նուիրեալ գործիչներ շատ տայ: